ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/22 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թվով 11 դպրոցների փոշեկուլների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 18.02.2025թ. ժամը 10:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան
Ցոլակ Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հերմինե Ալոյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ
2	Շուշան Տեխնիկս ՍՊԸ
3	Ա/Ձ «Թամարա Պետրոսյան Բոգդանի»
4	Արարատ Բաղալյան Սերգուշի
5	Սպորտ Ինսայթ ՍՊԸ
6	ՄԻՆՈՆ ՍՊԸ
7	ՎԻԿՈՍ ՍՊԸ
8	ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ
9	«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Գնման գինը ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը	Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ	
			Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	1100000	ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ	490000	588000
		Շուշան Տեխնիկս ՍՊԸ	540000	540000
		Ա/Ձ «Թամարա Պետրոսյան Բոգդանի»	572100	572100

		Արարատ Բաղալյան Սերգուշի	624000	624000
		Սպորտ Ինսայթ ՍՊԸ	686100	686100
		ՄԻՆՈՆ ՍՊԸ	734400	881280
		ՎԻԿՈՍ ՍՊԸ	950000	1140000
		ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	55000000	66000000
		«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ	4600000000	5520000000

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ,310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 20.02.2025թ. ժամը 10:20-ին

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ-ի հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը :

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ,310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 12.03.2025 թ. ժամը 11:30-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն առաջարկվող մոդելի հզորությունը ներկայացվել է 2300Վտ, ինչը չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված մոդելի հզորությունը 600Վտ է:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը

ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի, Ա/Ձ «Թամարա Պետրոսյան Բոգդանի»-ի, Արարատ Բաղալյան Սերգուշի-ի, Սպորտ Ինսայթ ՍՊԸ-ի և ՄԻՆՈՆ ՍՊԸ-ի հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

9.3 ՎԻԿՈՍ ՍՊԸ-ի, ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի և «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են համակարգի կողմից նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

10.Գնահատման արդյունքների մասին

10.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած, պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.2 Հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ հոդվածի 19-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել ԷՎԱ ԲԵՍԹ ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Անահիտ Հակոբյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Հերմինե Ալոյան /քարտուղար/